



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՂ ՏԱՐԻ 11(325) 08.06.2017թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՅՈԹԵՐՈՂ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
97	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի N 865-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 364-Ն որոշումը.....	2
98	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 918-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության N 375-Ն որոշումը.....	4
99	«2017 թվականի ամառային զորակոչ կազմակերպելու մասին» ԼՂՀ կառավարության N 390-Ն որոշումը.....
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
100	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 1601/02/13թ. որոշումը.....	5
101	ԼՂՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ 0010/02/15թ. որոշումը.....	14

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2017թ.

N 364-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 865-Ն որոշման N 1 հավելվածի և N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի ապրիլի 20-ի ՀՕ-5-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 2017 թվականի մայիսի 26-ի N 364-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ
 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	-	198 882,3	324 441,9	450 000,0
այդ թվում՝				
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	-	198 882,3	324 441,9	450 000,0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿՎԱԿԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
 Լեռնային Ղարաբաղի
 Հանրապետության կառավարության
 2017 թվականի մայիսի 26-ի N 364-Ն որոշման

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 865-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ
 N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	198 882,3	324 441,9	450 000,0
			այդ թվում՝				
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ	-	198 882,3	324 441,9	450 000,0
	2		Այլ ծախսեր	-	198 882,3	324 441,9	450 000,0
		1	Այլ ծրագրեր	-	198 882,3	324 441,9	450 000,0
		02	Կապիտալ ներդրումներ	-	198 882,3	324 441,9	450 000,0
			ԼՂՀ քաղաքաշինության նախարարություն	-	198 882,3	324 441,9	450 000,0

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿՎԱԿԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 հունիսի 2017թ.

N 375-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 918-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ջեռուցման օրերի առավելագույն քանակ սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 24-ի N 765-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 918-Ն որոշման 1¹-ին կետում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) «սույն որոշման հավելվածում նշված և չնշված բնակավայրերում՝» բառերից հետո լրացնել «2016-2017 թվականներին» բառերով.

2) 5-րդ ենթակետում «150» թիվը փոխարինել «163» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2016 թվականի հոկտեմբերի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

\

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Բաղաքացիական գործ ԸԻԴ 1601/02/13թ.
Բաղաքացիական գործ ԸԻԴ 1601/02/13թ.
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Լ.Ավանեսյան

**ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 25-ին մայիսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ա.Հայրապետյանի
դատավորներ՝ Վ.Հովսեփյանի
Գ.Արզումանյանի

դրնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Լաուրա Նորիկի Վարդանյանի ընդդեմ Կայծեր Ալեքսեյի և Անահիտ Ալեքսանդրի Բաբայանների՝ առանձնատնից և տնամերձ հողամասից վտարելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցի Կայծեր Ալեքսեյի և Անահիտ Ալեքսանդրի Բաբայանների ընդդեմ Լաուրա Նորիկի Վարդանյանի՝ 3.100.000 ՀՀ դրամ՝ որպես առանձնատան և տնամերձ հողամասի բարելավման համար կատարած ծախսերը բռնագանձելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի մարտի 7-ի որոշման դեմ հայցվոր /հակընդդեմ պատասխանող/ Լաուրա Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Սադաթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը.

2013 թվականի սեպտեմբերի 11-ին Լաուրա Վարդանյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ իր ներկայացուցիչ Ա.Սադաթյանի միջոցով ընդդեմ Կայծեր և Անահիտ Բաբայանների /այսուհետ՝ նաև Պատասխանողներ/ հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան /այսուհետ՝ Առաջին ատյանի դատարան/ ԼՂՀ Մարտունու շրջանի Նորշեն գյուղում գտնվող սեփականության իրավունքով իրեն պատկանող առանձնատնից /այսուհետ նաև՝ Բնակարան/ և տնամերձ հողամասից վտարելու մասին պահանջով:

2013 թվականի նոյեմբերի 15-ին Պատասխանողներն ընդդեմ Հայցվորի հակընդդեմ հայց են ներկայացրել 3.100.000 /երեք միլիոն հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ որպես Բնակարանի վրա կատարված բարելավման ծախս, բռնագանձելու մասին պահանջով:

Առաջին ատյանի դատարանի 2016թ. դեկտեմբերի 27-ի վճռով հայցը բավարարվել է լրիվությամբ, իսկ հակընդդեմ հայցը՝ մասնակի՝ 2.066.344 /երկու միլիոն վաթսուներեք հազար երեք հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամի չափով:

Հայցվորի ներկայացուցիչ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2017թ. մարտի 7-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է, և Առաջին ատյանի դատարանի վճիռը՝ որոշման պատճառաբանություններով, թողնվել է օրինական ուժի մեջ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2017թ. ապրիլի 6-ին Հայցվորի ներկայացուցիչ Ա.Մադաթյանը վճռաբեկ բողոք է ներկայացրել Գերագույն դատարան:

Գերագույն դատարանի 2017թ. ապրիլի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Պատասխանողների ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով.

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 48-րդ, 49-րդ հոդվածների, 121-րդ հոդվածի 3-րդ մասի, 122-րդ հոդվածի 1-ին մասի և 276-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, սխալ է մեկնաբանել թիվ 1247/02/11թ. գործով Առաջին ատյանի դատարանի 2011թ. հոկտեմբերի 10-ի վճիռը և նույն գործով Գերագույն դատարանի 2012թ. մարտի 28-ի որոշումն ու ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1056-րդ, 1092-րդ և 1095-րդ հոդվածների սխալ կիրառման արդյունքում անհիմն կերպով օրինական ուժի մեջ է թողել Առաջին ատյանի դատարանի՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակասող վճիռը:

Բողոք բերած անձը նշված պնդումները հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը հակընդդեմ հայցը չպետք է ընդուներ և համատեղ քննել սկզբնական հայցի հետ ու հիմնավոր համարելով ստորադաս դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածը խախտելու մասին վերաքննիչ բողոքի հիմքը, բողոքարկվող վճիռը բեկանելու փոխարեն, բավարարել է միայն դիրքորոշում արտահայտելով: Դրա հետ մեկտեղ Վերաքննիչ դատարանն անհիմն նշել է, որ սկզբնական հայցվորը տանը բնակվելու դիմաց վարձավճարի գումարը հակընդդեմ հայցվորներից բռնագանձելու մասին պահանջ չի ներկայացրել, այդ այն դեպքում, երբ հակընդդեմ հայցը սկզբնական հայցի հետ մեկ վարույթում քննելու պատճառով, սկզբնական հայցվորը գրկվել է երեք տարիների ընթացքում առանձնատանը բնակվելու համար վարձավճարի գումարը պատասխանողներից գանձելու մասին պահանջ ներկայացնելու հնարավորությունից, այսինքն իր կամքից անկախ հանգամանքներով հայտնվել է հակընդդեմ հայցվորներին ոչ հավասար պայմաններում, որով էլ խախտվել են քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ և 6-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև սկզբնական հայցվորը գրկվել է նույն օրենսգրքի 2-րդ հոդվածով իրեն վերապահված իրավունքների իրականացման հնարավորությունից:

Բողոքաբերը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասը խախտելու մասին հիմնավոր ճանաչված լինելու հանգամանքը Վերաքննիչ դատարանի համար հիմք է եղել դատարանի վճիռը բողոքարկված մասով բեկանելու և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կամ 4-րդ կետերի պահանջների շրջանակներում համապատասխան որոշում կայացնելու համար:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել թիվ 1105/02/15թ. Քաղաքացիական գործով ԼՂՀ Գերագույն դատարանի 2017թ. փետրվարի 15-ի որոշումը, ըստ որի՝ դատարանը կաշկանդված չէ հայցվորի հայտարարած փաստերի իրավական որակմամբ և պարտավոր է իրավական գնահատական տալ, իրավաբանորեն որակել հենց հայցվորի ցույց տված իրավաբանական փաստերը... Դատարանը բոլոր դեպքերում քննության ենթակա վիճելի իրավահարաբերությունը կարգավորող նորմերն ընտրում և կիրառում է՝

ելնելով հայցի հիմքում ընկած իրավաբանական փաստերից, այլ ոչ թե հայցվորի կողմից վկայակոչված իրավական նորմերից:

Այդ առումով բողոքաբեր կողմը չի ընդունում Վերաքննիչ դատարանի այն մոտեցումը, որ դատարանն իրավունք ունենալով իր նախաձեռնությամբ փոխելու հայցի իրավական հիմքը, կարող է այն դնել վճռի հիմքում՝ առանց այդ նոր կամ լրացված ու փոփոխված հիմքով դատաքննություն իրականացնելու և երեք տարիների ընթացքում տարված դատաքննության ընթացքում որևէ անդրադարձ չի կատարել և հնարավորություն չի տվել հակընդդեմ պատասխանող կողմին անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունների վերաբերյալ իր դիրքորոշումն արտահայտելու:

Բողոքաբեր կողմը գտնում է, որ վճռի հիմքում պետք է դրվեն միայն այն փաստերն ու հիմքերը, որոնք քննվել են դատաքննության ընթացքում կամ որոնց մասին գործում առկա են գրավոր ապացույցներ, ուստի Առաջին աստիճանի դատարանն իրավունք չի ունեցել առանց բողոքաբեր կողմի դիրքորոշումը լսելու և այն քննության առարկա դարձնելու՝ կիրառել ԼՂՀ նախկին քաղաքացիական օրենսգրքի 61-րդ գլխի նորմերը:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թիվ 1247/02/11թ. գործով 2011թ. հոկտեմբերի 10-ի օրինական ուժի մեջ մտած վճռով և նույն գործով Գերագույն դատարանի 2012թ. մարտի 28-ի որոշմամբ հաստատված է համարվել, որ Պատասխանողները տեղափոխվել և բնակվել են վեճի առարկա տանը՝ սկսած 2007 թվականից: Այնինչ Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը մերժելու հիմքում դրել է նաև հակընդդեմ հայցադիմումին կցված՝ Նորշեն համայնքի մի խումբ բնակիչների կողմից կազմված և համայնքի կնիքով ու ղեկավարի ստորագրությամբ վավերացված վկայությունը, որի համաձայն՝ Կայծեր Բաբայանը 1998 թվականից զբաղեցնում է Բնակարանը, ինչպես նաև նույն համայնքի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված ակտը, որոնք թիվ 1247/02/11թ. գործի վերոնշյալ վճռով ճանաչվել են որպես ոչ թույլատրելի ապացույցներ, որպես «շինձու փաստաթղթեր, որոնք որևէ իրավական ուժ ունենալ չեն կարող»: Իսկ այդ վճռով նաև հաստատվել է, որ մինչև 2007 թիվը ներառյալ, Բնակարանում բնակվել է Կայծեր Բաբայանի եղբոր Ալբերտ Բաբայանի ընտանիքը:

Ավելին, չնայած օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով հաստատված է, որ Պատասխանողները հանդիսանում են Բնակարանի անբարեխիղճ ձեռքբերողներ, սակայն Վերաքննիչ դատարանը միանշանակ նշել է, որ «Պատասխանողները մինչև 05.04.2013թ. համարվել են տան բարեխիղճ տիրապետողներ»:

Վերոշարադրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել և փոփոխել Վերաքննիչ դատարանի 2017թ. մարտի 7-ի որոշումը և հակընդդեմ հայցը մերժել կամ գործն ուղարկել Առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Վճռաբեկ բողոքի պատասխանում խնդրվել է վճռաբեկ բողոքը մերժել՝ հիմնավորելով, որ Հայցվորներն ինքնակամ չեն մտել Բնակարանը, այլ ընդառաջելով համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ ցանկացել են հրետակոծության ենթարկված և անտերության մատնված Բնակարանը վերանորոգել, իսկ այնուհետև՝ սեփականության իրավունքով տնօրինել այն:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

1. Համաձայն «ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ Մարտունու տարածքային ներկայացուցչության կողմից 2011թ. հունիսի 16-ին տրված N14 թվակիր գրության՝ Մարտունու շրջանի Նորշենի գյուղական խորհրդի 1963-1965թթ. տնտեսական գրքերի արխիվային ֆոնդի փաստաթղթային նյութերի ամուսիններ Նորիկ Ավետիսի և Նինա Երվանդի Վարդանյանները համատեղ կյանքի ընթացքում ունեցել են մեկ երեխա՝ Լաուրա Նորիկի Վարդանյանը՝ ծնված 1949 թվականին: Ընտանիքով բնակվել են Նորշեն գյուղում Նորիկ

Վարդանյանի անվամբ գրանցված սեփական տանը: Տանը կից առկա է 290 քառ. մետր հողամաս /հատոր 1, թ.հ. 41/:

2. Հայցվորի հայրը՝ Նորիկ Վարդանյանը, մահացել է 1991թ. օգոստոսի 23-ին, իսկ մայրը՝ Նինա Վարդանյանը՝ 1993թ. դեկտեմբերի 29-ին /հ. 1, թ.հ. 63-64/:

3. Ըստ հայցի Կայծեր Ալեքսեյի Բաբայանի ընդդեմ Լաուրա Նորիկի Վարդանյանի՝ «Ձեռք բերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին» և ըստ հայցի Լաուրա Նորիկի Վարդանյանի ընդդեմ Կայծեր Ալեքսեյի Բաբայանի, ԼՂՀ Սարտունու շրջանի Նորշեն համայնքի՝ ի դեմս համայնքի ղեկավար Արթուր Սարյանի՝ «Ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին» ԸԻԴ 1247/02/11թ. քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 2011թ. հոկտեմբերի 10-ի վճռով հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել: Լաուրա Վարդանյանը ճանաչվել է ԼՂՀ Սարտունու շրջանի Նորշեն գյուղում գտնվող իր ծնողներ Նորիկ և Նինա Վարդանյանների մահից հետո սեփականության իրավունքով պատկանող առանձնատան և նրան կից 290 քառ. մետր տնամերձ հողամասի 2/3-րդ մասի նկատմամբ որպես ժառանգությունը փաստացի ընդունած ժառանգ:

4. Նշված գործով Առաջին ատյանի դատարանի դատական նիստում Կայծեր Բաբայանի եղբայր Ալբերտ Բաբայանի տված ցուցմունքի համաձայն՝ համայնքի ղեկավարի թույլտվությամբ սկզբից ինքն է մտել և մինչև 2007թ. բնակվել վեճի առարկա Բնակարանում, որի ընթացքում փոխել է նրա տանիքը, հատակը, առաստաղը, սվաղը, գազ է գցել: Բնակարանի հարկերի մուծումները կատարել է հարևանությամբ բնակվող Արաքսյայի անունով, որի մոտ էր գտնվում Բնակարանի բանալիները /ԸԻԴ 1247/02/11թ. Քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 2011թ. սեպտեմբերի 19-ի դատական նիստի արձանագրության 21-23-րդ էջեր/:

5. Նշված գործով Վերաքննիչ դատարանի՝ 2011թ. դեկտեմբերի 29-ի օրինական ուժի մեջ մտած որոշման համաձայն՝ Բնակարանը Կայծեր Բաբայանի տիրապետմանն անցել է ոչ բարեխիղճ եղանակով:

6. Կողմերի միջև սույն վեճին առնչվող օրինական ուժի մեջ մտած բոլոր դատական ակտերով հաստատված է, որ Կայծեր Բաբայանը Բնակարանում սկսել է բնակվել 2007 թվականից:

7. Բնակարանի նախնական վիճակի վերաբերյալ Պատասխանողների կողմից ներկայացված ապացույցներն Առաջին ատյանի դատարանի 2011թ. հոկտեմբերի 10-ի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են ոչ թույլատրելի ապացույցներ:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և գտնում է, որ տվյալ դեպքում Գերագույն դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները՝ քաղաքացիական իրավունքներն իրականացնելու սահմանների, ապացուցելուց ազատվելու հիմքերի, գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից վերադարձնելու ժամանակ հաշվարկների, առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողությունների և անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունների վերաբերյալ, կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական և կանխատեսելի դատական պրակտիկա ձևավորելու համար:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը դասվում է մարդու քաղաքացիական /անձնական/ իրավունքների շարքին, որոնք կոչված են ապահովելու մարդու, որպես անհատի, կյանքի արժանապատվության, ազատության և նրա մասնավոր կյանքի հետ կապված այլ իրավունքների պահպանությունը: Ոչ ոք իրավունք չունի առանց օրինական հիմքերի մտնել ուրիշի բնակարան

կամ այնտեղ մնալ սեփականատիրոջ կամքին հակառակ: Յուրաքանչյուրի բնակարանի անձեռնմխելիության իրավունքն ամրագրված է ինչպես միջազգային Կոնվենցիաներով, այնպես էլ իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ 2006թ. Սահմանադրության 24-րդ և ԼՂՀ 2017թ. Սահմանադրության 32-րդ հոդվածներով:

Հաշվի առնելով, որ կողմերի միջև համապատասխան քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ծագել են նախքան ԼՂՀ նոր քաղաքացիական օրենսգիրքն ուժի մեջ մտնելը, ուստի սույն գործի բողոքարկված մասով կիրառելի է 2001թ. հուլիսի 1-ից ԼՂՀ-ում կիրարկման մեջ դրված ՀՀ 1998թ. քաղաքացիական օրենսգիրքը /այսուհետ՝ նաև Օրենսգիրք/:

Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողությունները, որոնք իրականացվում են բացառապես այլ անձի վնաս պատճառելու մտադրությամբ, ինչպես նաև իրավունքն այլ ձևով չարաշահելը չի թույլատրվում: Այս հոդվածում «իրավունքն այլ ձևով չարաշահելը» գործողությունը ենթադրում է, որ քաղաքացիական իրավունքների իրականացման ընթացքում չպետք է խախտվեն այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, քաղաքացիական իրավունքներ կրողները պետք է գործեն խելացի և բարեխիղճ, և որ քաղաքացիական իրավունքները պետք է իրականացվեն համաձայն իրենց նշանակության, առանց այլ անձանց վնաս պատճառելու մտադրության:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում օրենսդիրը սահմանել է ապացուցման կարիք չունեցող փաստերի այն հիմքերը, որոնց հիման վրա գործին մասնակցող անձն ազատվում է տվյալ փաստի ապացուցման պարտականությունից: Այդպիսի հիմք է նաև նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթը, որի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները կրկին չեն ապացուցվում: Իսկ դա նշանակում է, որ նախադատելի փաստերն ազատվում են ապացուցելուց, քանի որ դրանք սահմանված են դատարանի օրինական ուժի մտած վճռով և որևէ հիմք չկա դրանք կասկածի տակ դնելու:

Ըստ հայցի Կայծեր Ալեքսեյի Բաբայանի ընդդեմ Լաուրա Նորիկի Վարդանյանի ձեռքբերման վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու մասին և ըստ հայցի Լաուրա Նորիկի Վարդանյանի ընդդեմ Կայծեր Ալեքսեյի Բաբայանի և ԼՂՀ Մարտունու շրջանի Նորշեն համայնքի ղեկավարի՝ Ժառանգությունն ընդունած Ժառանգ ճանաչելու մասին ԸԻԴ 1247/02/2011թ. քաղաքացիական գործով Առաջին ատյանի դատարանի 2011թ. հոկտեմբերի 10-ի օրինական ուժի մեջ մտած վճռով Լաուրա Վարդանյանը ճանաչվել է Բնակարանի և նրան կից 290 քառ. մետր հողամասի 2/3-ի նկատմամբ որպես ժառանգությունն ընդունած Ժառանգ, մինևույն ժամանակ չի վիճարկվել Բնակարանի մնացած մասը՝ 1/3-ը, Հայցվորին պատկանելու փաստը: Նույն վճռով հիմնավորվել է, որ Լ.Վարդանյանի կողմից Բնակարանի պահպանությունը հանձնված է եղել հարևանությամբ բնակվող Գավրուշա Աթալյանին, որ Բնակարանում մինչև 2002թ. աշնանը ոչ ոք չի բնակվել, 2002-2007թթ. Բնակարանը զբաղեցրել է Կայծեր Բաբայանի եղբոր՝ Ալբերտ Բաբայանի ընտանիքը՝ Նորշեն համայնքի ղեկավարի բանավոր թույլտվությամբ, իսկ 2007 թվականից հետո միայն Բնակարանը զբաղեցրել է Կ.Բաբայանի ընտանիքը:

Նույն վճռով և այն օրինական ուժի մեջ թողնելու վերադաս դատական ատյանների որոշումներով նաև հիմնավորվել է, որ Կ.Բաբայանի ընտանիքը Բնակարանի նկատմամբ բարեխիղճ տիրապետող չի հանդիսացել, և որ Բնակարանի սկզբնական վիճակի վերաբերյալ Նորշեն համայնքի մի խումբ բնակիչների անունից կազմված և համայնքի ղեկավարի կողմից 2011թ. հոկտեմբերի 7-ին վավերացված վկայությունը և համայնքի ղեկավարի «ս.թ. 01.10 N7 հրաման»-ով ստեղծված հանձնաժողովի կազմած համայնքի

ղեկավարի կողմից վավերացված ակտն իրավական ուժ չունեցող շինծու փաստաթղթեր են հանդիսանում:

Նման նախադատելի փաստերի /հանգամանքների/ առկայության դեպքում Վերաքննիչ դատարանն անհիմն եզրակացրել է, որ թեև Բնակարանը Բաբայանների ընտանիքի կողմից տիրապետվելու ժամանակահատվածների մասով գործում առկա ապացույցների միջև կան հակասություններ, բայց «նախքան Տան նկատմամբ Հայցվորի սեփականության իրավունքի ծագումն /05.04.2013թ./ այն բարեխղճորեն տիրապետել են Պատասխանողները»: Այդ առումով, Վերաքննիչ դատարանը, վկայակոչելով Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի և 135-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, միևնույն ժամանակ անտեսել է նույն Օրենսգրքի 1225-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները, համաձայն որոնց՝ ընդունված ժառանգությունը ժառանգության բացման ժամանակից համարվում է ժառանգին պատկանող, անկախ այդ գույքի նկատմամբ ժառանգի իրավունքի պետական գրանցումից, եթե նման իրավունքը ենթակա է գրանցման: Այս նորմի էությունն այն է, որ օրենսդիրը ժառանգական իրավունքի հարաբերություններում սեփականության իրավունքի ծագման պահը կապում է ոչ թե պետական գրանցման, այլ՝ ժառանգության բացման ժամանակի հետ: Մակայն, այս դրույթը բնավ չի նշանակում, որ ժառանգման կարգով անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերված իրավունքն ընդհանրապես ենթակա չէ պետական գրանցման:

Օրենսգրքի 275-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով բարեխիղճ ձեռք բերող համարվում է այն անձը, ով գույքը ձեռք բերելիս չէր իմանում և չէր կարող իմանալ, որ նա գույքը հատուցմամբ ձեռք է բերել այն օտարելու իրավունք չունեցող անձից: Ամեն դեպքում, երբ անձը, առանց սեփականատիրոջ համաձայնության, բնակվելու նպատակով զբաղեցնում է սեփականատիրոջ բնակարանը, բարեխղճության մասին խոսք լինել չի կարող, ուստի նման անձը պետք է համարվի ապօրինի, անբարեխիղճ տիրապետող: Վերոնշյալ նորմի համատեքստում Գերագույն դատարանն արձանագրում է, որ Կ.Բաբայանը սահմանազանցել է իր քաղաքացիական իրավունքները և ապօրինի, առանց Լ.Վարդանյանի համաձայնության, ընտանիքով մտել և բնակվել է Հայցվորի Բնակարանում՝ որևէ հիմք չունենալով, որ այն պատկանում է իրեն: Իսկ Լ.Վարդանյանը, իմանալով իր խախտված իրավունքների մասին, դեռևս 2010թ. Կ.Բաբայանի ընտանիքին Բնակարանից վտարելու գործողություններ է ձեռնարկել:

Համաձայն գործի նյութերի՝ սկզբնական հայցի մասով Առաջին ատյանի դատարանի 2016թ. դեկտեմբերի 27-ի վճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 1-ին մասի ուժով այն 2017թ. հունվարի 30-ին մտել է օրինական ուժի մեջ, ուստի Առաջին ատյանի դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու մասին վճռաբեկ բողոքի հիմքին Գերագույն դատարանը չի անդրադարձնում:

Առաջին ատյանի դատարանի կողմից հայցի իրավական հիմքը սեփական նախաձեռնությամբ փոխելու, այն վճռի հիմքում դնելու՝ առանց այդ փոփոխված հիմքով դատաքննություն տանելու և ի շահ ուրիշի գործողությունների հետևանքով անհիմն հարստացմանը վերաբերող իրավական ինստիտուտների դրույթներն անհիմն կիրառելու մասին վճռաբեկ բողոքի հիմքի կապակցությամբ Գերագույն դատարանը, սույն գործի շրջանակներում, անհրաժեշտ է համարում արտահայտել իր հետևյալ իրավական դիրքորոշումները.

Օրենսգրքի «Առանց հանձնարարության, ի շահ ուրիշի գործողություններ» վերտառությամբ 59-րդ գլխի նորմերով կարգավորվող իրավահարաբերությունները միակողմանի գործողություններից ծագող արտապայմանագրային պարտավորություններ են, որոնց գործողության պայմանները նշված են նույն գլխի 1048-րդ հոդվածում: Բոլոր դեպքերում, ի շահ ուրիշի գործողություններ կատարողը, գործելով կամավորապես և իր նախաձեռնությամբ, պետք է

հաստատապես իմանա, որ գործում է ուրիշի օգտին՝ զուտ մարդասիրական և բարոյական նկատառումներով: Ընդհանուր կանոնից օրենսդիրը միայն մեկ բացառություն է կատարել, երբ անձի կատարած գործողությունները, որոնք անմիջականորեն ուղղված չեն այլ անձի շահերի ապահովմանը կամ գործողություն կատարող անձը սխալմամբ ենթադրել է, որ ինքը գործում է իր օգտին, բայց դրանք հանգեցրել են անհիմն հարստացման: Նման դեպքում առաջացած հարաբերությունները պետք է կարգավորվեն Օրենսգրքի 61-րդ գլխի՝ անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններին վերաբերող կանոններով /Օրենսգրքի 1056-րդ հոդված/: Այս հոդվածը և նրա հետ անխզելիորեն կապված Օրենսգրքի 61-րդ գլխի նորմերը հիմնված են այն սկզբունքի վրա, որպեսզի ոչ ոք, առանց պատշաճ իրավական հիմքի, անհիմն չհարստանա, այսինքն, մեկի կողմից մյուսի հաշվին հարստացումը պետք է կատարված լինի օրինական հիմքերի բացակայության պայմաններում:

Օրենսգրքի 1093-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ նույն Օրենսգրքով, այլ օրենքներով կամ այլ իրավական ակտերով և չի բխում համապատասխան հարաբերությունների էությունից, անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորություններ գլխում նախատեսված կանոնները ենթակա են կիրառման նաև սեփականատիրոջ կողմից իր գույքն ապօրինի տիրապետողից հետ ստանալու պահանջների նկատմամբ:

Գերագույն դատարանը շեշտում է, որ Օրենսգրքի 1093-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների նկատմամբ պետք է հաշվի առնել, որ անհիմն հարստացման դեպքում կողմերի միջև հաշվարկների կարգը որոշված է նույն Օրենսգրքի 276-րդ հոդվածով, որի բացառիկ կանոնները որպես հատուկ նորմեր, առաջնային են Օրենսգրքի 61-րդ գլխի՝ անհիմն հարստացմանը վերաբերող դրույթների նկատմամբ:

Շեղանակաբար, սույն գործով վեճը լուծելու համար նախապատվությունը պետք է տալ ոչ թե Օրենսգրքի 1056-րդ, 1092-րդ և 1095-րդ հոդվածներին, այլ նույն Օրենսգրքի 276-րդ հոդվածի կանոններին: Դա հիմնավորված է նրանով, որ անձի անհիմն հարստացման պատճառները պետք է որևէ այլ անձի սխալ գործողությունների հետևանքով լինեն: Իսկ բողոքարկված գործի նյութերը վկայում են, որ Բնակարանի վերանորոգումը կատարվել է ոչ թե սխալմամբ, այլ գիտակցաբար՝ առանց հանձնարարության կամ շահագրգիռ անձի հետագա ծանուցման: Բոլոր դեպքերում Կ.Բաբայանը դատարանին ապացույցներ չի ներկայացրել, որ իր գործողություններն ուղղված են եղել կանխելու Լ.Վարդանյանի գույքին պատճառվելիք վնասը: Ավելին, որևէ իրավական հիմք չի եղել, որը թույլ կտար Կ.Բաբայանին համոզվելու, որ նա Բնակարանն օգտագործում է օրինական հիմքերով:

Բնակարանի կոմունալ ծախսերի վճարումները կատարելով հարևանությամբ բնակվող Արաքսյա Աթալյանի անունից, Կ.Բաբայանն իմացել է, որ ինքը ոչ Բնակարանի սեփականատերն է, և ոչ էլ վարձակալը, որ Բնակարանը սեփականատեր ունի, ով այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից չի հրաժարվել, այն տիրագուրկ չի ճանաչվել և որ Բնակարանը գտնվել է Գավրուշա և Արաքսյա Աթալյան ամուսինների պահպանության ներքո, իսկ Պատասխանողների նախաձեռնությամբ վերանորոգումները կատարվել են Բնակարանում հարմարավետ ապրելու համար, որոնք այնտեղ բնակվել են /և բնակվում են/ երկարատև ժամանակահատվածում: Տվյալ դեպքում սույն գործով Օրենսգրքի 1056-րդ, 1092-րդ և 1095-րդ հոդվածների դրույթները կիրառելի չեն:

Այդ առումով Վերաքննիչ դատարանի վկայակոչումը՝ ԸԻԴ 0528/02/2011թ. գործով Գերագույն դատարանի 05.06.2012թ. որոշմամբ նույնանման հանգամանքներով Օրենսգրքի 1056-րդ, 1092-րդ, 1095-րդ հոդվածների պահանջները կիրառելու մասին, Գերագույն դատարանը գտնում է անհիմն և նշում, որ բողոքարկված և ԸԻԴ 0528/02/2011թ. գործերի փաստական հանգամանքերը բոլորովին տարբեր են, որովհետև վկայակոչված գործով կողմերը մերձավոր ազգականներ են հանդիսացել և պատասխանող կողմը սեփականության

իրավունքով Հայցվորին պատկանող բնակարանը զբաղեցրել է սեփականատիրոջ թույլտվությամբ և համաձայնությամբ:

Վերը նշված հիմնավորմամբ Կ.Բաբայանը Բնակարանի նկատմամբ հանդիսացել է անբարեխիղճ տիրապետող, իսկ համաձայն Օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ինչպես բարեխիղճ, այնպես էլ անբարեխիղճ տիրապետողն իր հերթին իրավունք ունի սեփականատիրոջից պահանջել գույքի վրա իրենց կատարած անհրաժեշտ ծախսերը՝ գույքից ստացված եկամուտները սեփականատիրոջը հասնելու պահից:

Օրենսդիրը չի նշել, թե ինչ պետք է հասկանալ անհրաժեշտ ծախսեր ասելով և որոնք են այդ ծախսերը: Օրենսգրքի 276-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով անհրաժեշտ ծախսերի տակ պետք է հասկանալ այն ծախսերը, որոնք անհրաժեշտ են գույքը բացառապես պատշաճ վիճակում պահելու և գույքն ըստ տնտեսական նշանակության օգտագործելու համար: Այդ ծախսերը պետք է լինեն արդարացված, բանական և օգտակար: Քանի որ «անհրաժեշտ ծախսեր» իրավական եզրույթը ենթակա է գնահատման, ուստի նման ծախսերի գնահատումը կախված է կոնկրետ գործի բոլոր հանգամանքները հաշվի առնելուց: Այն ավելորդ ծախսերը /օգտակար, ճոխության ծախսեր և այլն/, որոնք ուղղված են բնակվելու համար կենցաղային պայմանները բարելավելուն, հատուցման ենթակա չեն:

Նկատի ունենալով, որ սույն գործով Կ.Բաբայանի կողմից Բնակարանը բացարձակապես պահելու, պահպանելու նպատակով շինարարական աշխատանքներ կատարելու անհրաժեշտության մասին ներկայացված ապացույցներն Առաջին աստիճանի դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են իրավական ուժ չունեցող, ուստի գործի լուծման համար էական նշանակություն ունեցող մի շարք փաստական տվյալներ և հանգամանքներ մնացել են չբացահայտված, չստուգված և չհետազոտված, որի արդյունքում ստորադաս դատարանները կայացրել են չհիմնավորված և չպատճառաբանված դատական ակտեր:

Մասնավորապես, գործի նյութերով պարզված չէ Բնակարանի սկզբնական վիճակը, այն թշնամու կողմից հրետակոծության ենթարկվելու փաստը, Բնակարանի վրա շինարարական աշխատանքներ կատարելու սկիզբը և ավարտը, այդ աշխատանքների կատարման անհրաժեշտությունը, ենթադրյալ ծախսերի կատարման ժամանակահատվածը /մինչև 2007թ., թե դրանից հետո/, Ալբերտ Բաբայանի ներդրումը Բնակարանի շինվերանորոգմանը և ընտանիքով այնտեղ մինչև 2007թ. բնակվելը /թե վերանորոգումները հիմնականում կատարվել են Ալբերտ Բաբայանի՝ Բնակարանում բնակվելու ժամանակահատվածում, ապա Կայծեր Բաբայանը կարող է արդյոք գործով պատշաճ հայցվոր հանդիսանալ/, Բնակարանը սարքին վիճակում պահելու և այն ըստ տնտեսական նշանակության օգտագործելու համար ընթացիկ և հիմնական վերանորոգման համար կատարված ծախսերը նոր դատաքննության ընթացքում վերոնշյալ հարցերը քննության առարկա դարձնելուց հետո միայն կարելի է առանձնացնել Բնակարանի վրա կատարված անհրաժեշտ ծախսերի գումարը: Հատկանշական է, թե Վերաքննիչ դատարանն ինչ հատուկ գիտելիքների հիման վրա է եզրահանգել, որ «Փորձագետի եզրակացության կից լուսանկարչական հավելվածից հետևում է, որ բարելավումների համար կատարված ծախսերն իրենց բնույթով անհրաժեշտ են, քանի որ կատարված են Տունը բնակության համար պիտանի դարձնելու նվազագույն պահանջների սահմաններում»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ հարցերը կարելի է պարզել միայն նոր դատաքննության ընթացքում:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր դատաքննության ուղարկելու համար:

Վերոնշյալ պատճառաբանություններով հերքվում են վճռաբեկ բողոքի պատասխանում բերված փաստարկները:

Նկատի ունենալով, որ սույն գործն ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում, Գերագույն դատարանը գտնում է, որ այդ հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության ընթացքում:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 256-րդ հոդվածով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր /հակընդդեմ հայցով պատասխանող/ Լաուրա Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Մադաթյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի մարտի 7-ի որոշումը մասնակիորեն բեկանել և գործը՝ հակընդդեմ հայցի մասով, ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարից հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գ.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԴԴ 0010/02/15թ.
Քաղաքացիական գործ ԸԴԴ 0010/02/15թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Խաչատրյան
Դատավորներ՝ Ն.Գրիգորյան
Կ.Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 1-ին հունիսի 2017թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Վ. Հովսեփյանի
դատավորներ՝ Ա.Աբրահամյանի
Գ.Գրիգորյանի

դրնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Արծվիկ Նիկոլայի
Հովհաննիսյանի ընդդեմ Իրինա Հրանտի Օսիպովայի՝ փոխառության
գումարը և ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված
տոկոսները գանձելու պահանջների մասին ԸԴԴ 0010/02/15 քաղաքացիական
գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017թ. փետրվարի 23-ի որոշման դեմ
պատասխանող Իրինա Հրանտի Օսիպովայի և նրա ներկայացուցիչ
Ռ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը

Պ Ա Ր Զ Ե Ց

1.Գործի դատավարական նախապատմությունը

Արծվիկ Նիկոլայի Հովհաննիսյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ 2015թ.
հունվարի 12-ին հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին աստիճանի դատարան /այսուհետ՝ նաև Դատարան/ ընդդեմ Իրինա
Հրանտի Օսիպովայի /այսուհետ՝ նաև Պատասխանող/՝ 3.200.000 / երեք
միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ փոխառության գումարը և 18.12.2014
թվականից մինչև պարտավորության փաստացի մարման օրը ԼՂՀ քաղաքա-
ցիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսագումարները
գանձելու պահանջների մասին:

Դատարանի 2015 թվականի հունվարի 13-ի որոշմամբ 3.200.000 ՀՀ
դրամի չափով արգելանք է դրվել Իրինա Օսիպովայի սեփականության
իրավունքով պատկանող գույքի կամ դրամական միջոցների վրա:

Դատարանի 2015 թվականի հունվարի 13-ի որոշմամբ Հայցվորի կողմից
Դատարան հայցադիմում ներկայացնելու համար վճարման ենթակա 64.000 ՀՀ
դրամի չափով պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգվել է:

Դատարանի 2015 թվականի մարտի 24-ի որոշմամբ նշանակվել է
փաստաթղթաբանական փորձաքննություն և նույն օրվա որոշմամբ գործի
վարույթը կասեցվել:

Դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 20-ի որոշմամբ գործի վարույթը
վերսկսվել և նշանակվել է դատական քննության:

Դատարանի 2015 թվականի նոյեմբերի 30-ի վճռով հայցը մերժվել է:

2015 թվականի դեկտեմբերի 29-ին Դատարանի վերոհիշյալ վճռի դեմ
վերաքննիչ բողոք է բերել Հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2016
թվականի փետրվարի 5-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ Պատասխանողը և նրա ներկայացուցիչը վճռաբեկ բողոք են ներկայացրել:

ԼՂՀ Գերագույն դատարանի 2016 թվականի ապրիլի 28-ի որոշմամբ պատասխանող Ի. Օսիպովայի և նրա ներկայացուցիչ Ռ.Մարտիրոսյանի վճռաբեկ բողոքը բավարարվել է: Վերաքննիչ դատարանի 2016 թվականի փետրվարի 5-ի որոշումը բեկանվել և գործն ուղարկվել է Դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

2016 թվականի հուլիսի 12-ին պատասխանող Իրինա Օսիպովան դիմում է ներկայացրել ԼՂՀ ոստիկանության Ստեփանակերտ քաղաքի վարչություն:

Դատարանի 2016 թվականի հուլիսի 13-ի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցվել է:

2016 թվականի հուլիսի 25-ին քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումն ուղարկվել է Դատարան:

Դատարանի 2016 թվականի հուլիսի 25-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և գործը նշանակվել դատական քննության:

Դատարանի 2016 թվականի նոյեմբերի 28-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2016 թվականի դեկտեմբերի 28-ին հայցվոր Ա. Հովհաննիսյանի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը վերաքննիչ բողոք է ներկայացրել:

Վերաքննիչ դատարանը 2017թ. փետրվարի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է: Դատարանի 2016 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը բեկանվել և փոփոխվել է. Իրինա Հրանտի Օսիպովայից հոգուտ Արծվիկ Նիկոլայի Հովհաննիսյանի բռնագանձվել է 3.200.000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար: Իրինա Հրանտի Օսիպովայից հոգուտ Արծվիկ Նիկոլայի Հովհաննիսյանի բռնագանձվել է 3.200.000 /երեք միլիոն երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարի նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները՝ սկսած 2014 թվականի դեկտեմբերի 18-ից մինչև պարտավորության դադարման օրը:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք են բերել պատասխանող Իրինա Հրանտի Օսիպովան և նրա ներկայացուցիչ Ռ.Մարտիրոսյանը:

Գերագույն դատարանի 2017 թվականի ապրիլի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել և տրվել է մեկամսյա ժամկետ ձևական սխալները շտկելու համար:

2017 թվականի մայիսի 5-ին պատասխանող Իրինա Օսիպովան և նրա ներկայացուցիչ Ռ. Մարտիրոսյանը կրկին բերել են վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 877-րդ, 878-րդ, 882-րդ հոդվածների, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-50-րդ հոդվածների պահանջները, ինչի հետևանքով կայացրել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի դրույթներին հակասող դատական ակտ:

Բողոք բերած անձինք նշված պնդումը պատճառաբանել են հետևյալ փաստարկներով:

Վերաքննիչ դատարանը դատական ակտում հայցը բավարարելու հիմքում նշել է հետևյալը.

«Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Պատասխանողի առարկությունն այն մասին, թե ստացականում նշված գումարը չի ստացել, ապացուցված է համարել Պատասխանողի ցուցումներով, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշմամբ և Հայցվորի՝ նախաքննության մարմնում տված ցուցումներով, որտեղ Հայցվորը նշել է, որ 3.200.000 ՀՀ դրամը Պատասխանողին տվել է 2013 թվականի փետրվարին:

Վերաքննիչ դատարանն ավելացրել է, որ հիմք ընդունված վերը թվարկված ապացույցներով չի հիմնավորում այն կարևոր փաստը, որ Հայցվորը Պատասխանողին 3.200.000 դրամ չի տվել:

Բացի այդ՝ Վերաքննիչ դատարանը, վերլուծության ենթարկելով ԼՂՀ ոստիկանության կողմից հետաքննության կատարման ընթացքում տրված բացատրությունները, համաձայն որոնց՝ հետաքննության մարմինն իր որոշմամբ որևէ կողմի բացատրության նկատմամբ առավելություն չի տվել, հիմնավորված չէ համարել, որ Պատասխանողը Հայցվորին 3.200.000 ՀՀ դրամ չի տվել, այլ ապացուցվել է, որ Պատասխանողը Հայցվորին գումարը տոկոսով չի տվել»:

Ըստ բողոքի հեղինակների կարծիքի՝ ակնհայտ է, որ Վերաքննիչ դատարանը դատական ակտի հիմքում դրել է ԼՂՀ ոստիկանության կողմից կատարված հետաքննության նյութերը և ստորադաս դատարանի կողմից նշանակված փորձաքննության եզրակացությունը և ոչ ավելին:

Մինչդեռ սույն գործով դատարանը պարտավոր է եղել նկատի առնել գործով առկա մյուս ապացույցները, ինչպես նաև Պատասխանողի առարկությունը, համաձայն որի Պատասխանողը ոչ թե վիճարկել է 3.200.000 ՀՀ դրամ ստանալու հանգամանքը, այլ վիճարկել է այն, որ ստացել է 1.000.000 ՀՀ դրամ, իսկ 3.200.000 ՀՀ դրամի մասին ստացականը կազմվել է Հայցվորի չարամիտ համաձայնությամբ և այլ ծանր հանգամանքների բերումով: Հետևապես, Վերաքննիչ դատարանը պարտավոր էր վերը թվարկված ապացույցները գնահատելիս հաշվի առնել Պատասխանողի վիճարկման բնույթն առ այն, որ իրական պայմանագիրը կնքված է եղել ավելի վաղ ժամանակներում, քան տվյալ ստացականն է կազմվել:

Բացի այդ՝ Վերաքննիչ դատարանն ապացույցները գնահատելիս, պետք է հաշվի առնեք գործով հարցաքննված վկայի ցուցմունքն այն մասին, որ Պատասխանողը վճարման քարտը փոխանցել է Հայցվորին և որը Հայցվորը չի ժխտել, այլ պատճառաբանել է, որ այն չի աշխատել և նրա մեջ գումար չի եղել: Դատարանը պարտավոր է եղել հաշվի առնել այն հանգամանքը, որ գործով Հայցվորի աշխատանքի վայրից ներկայացված հաշվապահական փաստաթղթերը, ինչպես նաև բանկի կողմից ներկայացված տեղեկություններն ապացուցում են, որ Հայցվորի աշխատանքի վայրից գումար է փոխանցվել աշխատավարձի վճարման քարտի վրա և բանկի տեղեկություններով փոխանցված գումարը ելք է ունեցել: Նշված փաստերն ապացուցում են, որ Հայցվորը ստացել է Պատասխանողի աշխատավարձի վրա փոխանցված՝ շուրջ 800.000 ՀՀ դրամից ավելի գումարը:

Ստորադաս դատարանը նշված ապացույցը պետք է գնահատեր ու պատճառաբանեք, թե ինչու նշված հանգամանքներն ապացույց չեն կարող համարվել, այն դեպքում, երբ Հայցվորը ժխտել է նախքան 2013 թվականի փետրվարը գումար ստանալու հանգամանքը: Եթե Պատասխանողը փոխառության պայմանագիր չի կնքել մինչև 2013 թվականի փետրվարը, կամ ինչպես Վերաքննիչ դատարանն է նշել Հայցվորի հայտարարությունը, 2013 թվականի հունիսի 17-ը, ապա ինչու դրան նախորդած ժամանակաշրջանի հանգամանքները չի գնահատել և ապացույցներ չի համարել աշխատավարձի փոխանցումները, բանկից ելքերը և Պատասխանողի կողմից բանկում քարտի տվյալները փոփոխելը: Եթե Դատարանն ապացույցները ճիշտ գնահատեր, դրանք համադրեր մյուս փաստական հանգամանքների հետ, ապա Վերաքննիչ դատարանը չէր գա այն համոզման, որ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 876-րդ, 877-րդ, 879-րդ հոդվածները կիրառելի են:

Ինչ վերաբերում է փորձաքննության եզրակացությանը, ապա այն ևս կարիք է ունեցել գնահատել մյուս ապացույցների հետ միասին:

Հատկանշական է, որ Պատասխանողը նշել է ստացականի մասին, որ այն կազմվել է 2013 թվականի փետրվարին: Պատասխանողի և Հայցվորի հայտարարություններն էական նշանակություն ունեն գործի ապացույցներն օբյեկտիվ գնահատելու համար: Մասնավորապես, ստացականը կազմելու

Ժամանակն էական է պարտավորության ծագման փաստը հաստատելու համար:

Եթե ստացականը կազմվել է 2013 թվականի հունիսի 17-ին, ինչպես նշել է Հայցվորը, ապա ինչու բանկում Պատասխանողի անվամբ նախկինում գործող վճարման քարտի վրա աշխատավարձի գումարներ են փոխանցվել և այդ գումարներն ըստ Պատասխանողի ցուցմունքների, ստացել է Հայցվորը, ուստի արժանահավատ չէ՞ արդյոք Պատասխանողի այն ցուցմունքը, որ վճարման քարտի գործողությունը դադարեցնելուց հետո է կազմվել ստացականը:

Վերաքննիչ դատարանը, եթե նշված ապացույցները համադրեր մեկը մյուսի, այդ թվում ոստիկանության կողմից կատարված ստուգման նյութերի հետ, համաձայն որոնց քրեական գործի հարուցումը մերժելու մասին դատավարական որոշման մեջ հետաքննություն կատարող անձն արտահայտել է իր դիրքորոշումը, որ Պատասխանողը 2013 թվականի հունվարի 17-ին գումար չի ստացել, ապա չէր կիրառի ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ, 876-րդ, 877-րդ, 879-րդ հոդվածները և չէր բավարարի հայցը:

Բողոքաբերները նշել են, որ Վերաքննիչ դատարանն իրապես ճիշտ չի գնահատել, թե գործի ապացուցման ենթակա շրջանակները որոնք են հանդիսանում: Մասնավորապես, ստորադաս դատարանը նկատի չի առել 3.200.000 ՀՀ դրամի վերաբերյալ կազմված ստացականի նախորդած ժամանակաշրջանը, այլ միայն նկատի է առել ստացականի փաստը, անտեսելով Պատասխանողի վիճարկման էությունը, որ գումար ստացել է 1.000.000 ՀՀ դրամ, որի համաձայն էլ Հայցվորին տվել է 1.824.000 ՀՀ դրամ: Այսինքն՝ Պատասխանողն ապացուցել է, որ իր և Հայցվորի միջև կնքված է եղել փոխառության պայմանագիր, որի վերաբերյալ կազմվել է ստացական և այդ գումարից ավելին է վճարել Պատասխանողին, իսկ 3.200.000 ՀՀ դրամի մասին կազմված ստացականը գուտ պայմանավորված է եղել նախորդ ժամանակաշրջանում փոխառության պայմանագրով սահմանված 10 տոկոսը չվճարելու հետևանքով, և քանի որ Պատասխանողը վճարման քարտի միջոցով դադարեցրել է Հայցվորին գումարի վճարումը՝ Հայցվորի չարամիտ գործողություններով կազմվել է ստացականը: Ընդ որում, չնայած նրան, որ Պատասխանողը որպես ապացույց է ներկայացրել ծանր հանգամանքների բերումով ստացականը կազմված լինելու հանգամանքը, այնուամենայնիվ, դատարանը ևս չի պատճառաբանել, թե ստացականի կազմման նախորդած հանգամանքները և վկաների կողմից մատնանշված փաստը, որ Հայցվորը ներկայացել է աշխատասենյակ և դուրս հրավիրել աշխատասենյակից, ինչու թույլատրելի ապացույց չեն հանդիսանում:

Ըստ բողոքի հեղինակների՝ Վերաքննիչ դատարանը գործում առկա ապացույցները չի գնահատել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության հիման վրա ու պատշաճ գնահատական չի տվել գործի համար էական նշանակություն ունեցող մի շարք փաստերին, այդ թվում նաև Պատասխանողի քարտին աշխատավարձի գումարներ փոխանցված լինելու, այդ քարտը Հայցվորի մոտ գտնվելու ու քարտից գումարների ելքին և արդյունքում ստորադաս դատարանը թույլ է տվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-50-րդ հոդվածների խախտումներ՝ կայացնելով սխալ դատական ակտ:

Վերոգրյալների հիման վրա բողոքաբերները խնդրել են ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 2017 թվականի փետրվարի 23-ի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 2016 թվականի նոյեմբերի 28-ի դատական ակտին:

3. Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վճարել բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Գործում առկա ստացականի լուսապատճենի համաձայն՝ 2013 թվականի հունիսի 17-ին Պատասխանողը Հայցվորից պարտքով վերցրել է

3.200.000 ՀՀ դրամ գումար, որը պարտավորվել է վերադարձնել 1 տարի 6 ամիս անց՝ 2014 թվականի դեկտեմբերի 17-ին:

2. Պատասխանողը չի ընդունել, որ 17.06.2013թ. ստացականով Հայցվորից ստացել է 3.200.000 ՀՀ դրամ, այլ պնդել է, որ 2011 թվականին Հայցվորից փոխառությամբ վերցրել է 1.000.000 ՀՀ դրամ գումար, իսկ Հայցվորի պահանջած 3.200.000 ՀՀ դրամը կազմում է որպես 1.000.000 ՀՀ դրամի նկատմամբ հաշվարկված տոկոսագումարը:

3. Ըստ Պատասխանողի՝ ինքը լրիվությամբ մարել է պարտքը, իսկ ստացականը ստորագրել է իր համար ծանր հանգամանքների բերումով: Պարտքը մարելու նպատակով 2012թ. օգոստոսին իր պլաստիկ քարտը Գայանե Պողոսյանի միջոցով փոխանցել է Հայցվորին ու վերջինս յոթ ամիս շարունակ՝ մինչև 2013 թվականի փետրվար ամիսը, ստացել է այդ քարտի վրա փոխանցվող իր աշխատավարձը:

4. Հայցվորն ընդունել է, որ քարտը հանձնվել է իրեն, սակայն պատճառաբանել է, որ այն գործող քարտ չէր ու ինքն այն դեն է նետել:

5. Ըստ «Ամերիաբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղից տրված Իրինա Հրանտի Օսիպովայի քարտի քաղվածքի՝ 1570012630270100 քարտային հաշվի համարից 2012 թվականի օգոստոսից մինչև 2013թ. փետրվար ամիսը ներառյալ կատարվել է ընդհանուր գումարով 886.000 /ուր հարյուր ութսունվեց հազար/ ՀՀ դրամի կանխիկ ելքեր:

6. Համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ-ից տրված CMO.AB.70110RB CMS 4.4826.16 առ 08.11.16թ. գրության՝ Իրինա Հրանտի Օսիպովայի համար 20.08.11թ. բացվել է 1570012630270100 քարտային հաշիվն ու տրվել քարտ և այն գործել է մինչև 2013թ. ապրիլի 29-ը:

7. Գործում առկա փորձագիտական եզրակացության համաձայն՝ փորձաքննությանը ներկայացված «Մտացական» վերնագրով «17.06.2013թ.» թվագրմամբ փաստաթղթում առկա ձեռագիր գրառումների և ստորագրությունների կատարման վաղեմությունը կազմում է երկու տարի +- երեք ամիս՝ հաշված 2015թ. սեպտեմբեր ամսից:

8. Վերաքննիչ դատարանը հայցը բավարարել է 3.200.000 ՀՀ դրամի չափով, սակայն պատշաճ գնահատական չի տվել Պատասխանողի առարկություններին:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ և 49-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը: Այդ տեղեկությունները հաստատվում են՝ 1.գրավոր և իրեղեն ապացույցներով, 2.փորձագետների եզրակացություններով, 3.վկաների ցուցմունքներով, 4. գործին մասնակցող անձանց ցուցմունքներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ

բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից վկայակոչված փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայցվորը պահանջում է Պատասխանողից բռնագանձել 3.200.000 ՀՀ դրամ՝ որպես փոխառությամբ տրված գումար, իսկ որպես հայցի փաստական հիմք Հայցվորը նշում է իր և Պատասխանողի միջև 2013 թվականի հունիսի 17-ին 3.200.000 ՀՀ դրամի չափով փոխառության պայմանագիր կնքված լինելու, փոխառության գումարը ստացականում նշված ժամկետում վերադարձրած չլինելու փաստերը:

Պատասխանողն առարկելով հայցի դեմ, ցուցումնք է տվել, որ 3.200.000 ՀՀ դրամ գումար ինքը Հայցվորից 2013 թվականի հունիսի 17-ին չի ստացել, այլ Հայցվորից նախկինում ստացել է 1.000.000 ՀՀ դրամ, որն էլ ամբողջովին վերադարձրել է՝ մի մասն իր բանկային քարտը վկա Գայանե Պողոսյանի միջոցով Հայցվորին փոխանցելու ձևով, իսկ Հայցվորի պահանջած գումարը գոյացել է այդ 1.000.000 դրամը ժամանակին չվերադարձնելու հետևանքով առաջացած տոկոսների հաշվարկից, քանի որ Հայցվորն իրեն 1.000.000 ՀՀ դրամը տված է եղել ամսական 10 տոկոսով ու ստացականը ստորագրել է ծանր հանգամանքների բերումով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով ապացուցման առարկան ոչ միայն հայցի, այլ նաև առարկության հիմքում դրված և վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում նշված փաստերն են, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, Հայցվորը պետք է ապացուցեր իր և Պատասխանողի միջև փոխառության իրավահարաբերությունների առաջացման, Պատասխանողի կողմից 3.200.000 ՀՀ դրամ ստացված լինելու և ստացականում նշված ժամկետում վերադարձրած չլինելու փաստերը, իսկ Պատասխանողը պարտավոր էր ապացուցել, որ ստացականում նշված գումարը չի ստացել Հայցվորից և ինչքան գումար է վերադարձրել Պատասխանողին:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և նույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության 877-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Փոխառության պայմանագրով մեկ կողմը /փոխատուն/ մյուս կողմի /փոխառուի/ սեփականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել միևնույն գումարի դրամ /փոխառության գումարը/ կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք:

Փոխառության պայմանագիրը կնքված է համարվում դրամ կամ այլ գույք հանձնելու պահից»:

Նույն օրենսգրքի 878-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ 1. փոխառության պայմանագիրը կնքվում է գրավոր: 2. Ի հավաստումն փոխառության պայմանագրի և դրա պայմանների՝ կարող է ներկայացվել փոխառուի տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին տված ստացականը կամ փոխատուի կողմից փոխառուին որոշակի դրամական գումար կամ որոշակի քանակի գույք տալը հավաստող այլ փաստաթուղթ:

Իսկ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն՝ փոխառուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխառուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքը և հայցը բավարարելով, պատճառաբանել է, որ 17.06.2013թ. ստացականը պարտքային փաստաթուղթ է, որով Պատասխանողն ընդունել է Հայցվորի հանդեպ իր պարտքը և նշված ստացականի պայմաններում կողմերի միջև ծագել են պարտավորական իրավահարաբերություններ, անկախ այն հանգամանքից, թե ստացականում նշված գումարը Պատասխանողը ստացել է ստացականը կազմելու օրը, թե դրանից առաջ, իսկ Հայցվորն ապացուցել է Պատասխանողին առանց տոկոսի գումար տրամադրելու և ստացված գումարը Պատասխանողի կողմից չվերադարձնելու մասին հանգամանքների առկայությունը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի ուսումնասիրել սույն գործում առկա ապացույցները, ինչի արդյունքում սխալ հետևության է հանգել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստի վերաբերյալ: Մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ Պատասխանողն իր բանկային քարտը, որի վրա փոխանցվել են աշխատավարձի գումարները, գործով վկա Գայանե Պողոսյանի միջոցով փոխանցել է Հայցվորին և այդ քարտով Պատասխանողի քարտային հաշվից 2012 թվականի օգոստոս ամսից մինչև 2013 թվականի փետրվար ամիսը ներառյալ կատարվել է ընդհանուր գումարով 886.000 /ութ հարյուր ութսունվեց հազար/ ՀՀ դրամ գումարի կանխիկ ելք, իսկ Հայցվորը ընդունելով բանկային քարտը իրեն փոխանցելու փաստը, պատճառաբանել է, որ այն դեն է նետել, հետևաբար նշված քարտով գումարներ չստանալու հանգամանքը պարտավոր էր ապացուցել Հայցվորը, ինչը նրա կողմից չի կատարվել, ուստի՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, դրա բացասական հետևանքները կրում է Հայցվորը, իսկ ինչ վերաբերում է Հայցվորից 3.200.000 ՀՀ դրամ չստանալու և ստացած 1.000.000 ՀՀ դրամը վերադարձնելու Պատասխանողի առարկություններին, ապա Գերագույն դատարանը գտնում է, որ Պատասխանողը կրելով ապացուցման պարտականությունը, դրանց վերաբերյալ պատշաճ ապացույցներ չի ներկայացրել:

Նման պայմաններում Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը Պատասխանողի մատնանշած հանգամանքն անտեսելով և չկիրառելով համապատասխան դատավարական նորմը, սխալ եզրահանգման է եկել՝ հայցն ամբողջությամբ բավարարելու մասին և գտնում է, որ Պատասխանողի քարտային հաշվից կատարված 886.000 /ութ հարյուր ութսունվեց հազար/ ՀՀ դրամ գումարի կանխիկ ելքը պետք է հաշվանցել ստացականում նշված պարտքի գումարին ու հայցը բավարարել մասնակիորեն՝ 2.314.000 /երկու միլիոն երեք հարյուր տասնչորս հազար/ ՀՀ դրամի չափով, իսկ Պատասխանողի կողմից պարտավորության կետանց թույլ

տալու մասին Վերաքննիչ դատարանի եզրահանգումը, Գերագույն դատարանը գտնում է հիմնավոր ու պատճառաբանված:

Այսպիսով՝ սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Գերագույն դատարանը գտնում է, որ սույն քաղաքացիական գործով անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված լիազորությունը, համաձայն որի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման արդյունքում Գերագույն դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

ԼՂՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի /այսուհետ՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ԼՂՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը նշված հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելը և փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է: Դատական ակտը փոփոխելիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

4.1 Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են սույն հոդվածի կանոններին համապատասխան:

Գերագույն դատարանը նաև արձանագրում է, որ սույն գործով նկատի ունենալով, որ Պատասխանողը վճռաբեկ բողոքի համար երկու անգամ վճարել է 96.000-ական ՀՀ դրամ /ընդհանուր 192.000 ՀՀ դրամ/, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերող անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, Գերագույն դատարանը գտնում է, որ Պատասխանողի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը պետք է բաշխվի բավարարված հայցապահանջի չափին համամասնորեն,

այսինքն՝ Հայցվորից հոգուտ Պատասխանողի պետք է բռնագանձվի ընդհանուր գումարով 53.160 ՀՀ դրամ:

Գերագույն դատարանը նաև արձանագրում է, որ սույն գործով դատական ծախսերը կազմված են նաև հայցադիմումի և երկու անգամ վերաքննիչ բողոք ներկայացնելու համար նախատեսված պետական տուրքի գումարներից, որոնց վճարման համար Հայցվորին տրամադրվել է արտոնություն /պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում/, որը կազմում է համապատասխանաբար 64.000 /վաթսուհորս հազար/ ՀՀ դրամ և 192.000 /հարյուր ինսուներկու հազար/ ՀՀ դրամ, ընդհանուրը՝ 256.000 /երկու հարյուր հիսունվեց հազար/ ՀՀ դրամ, որն էլ պետք է բաշխվի կողմերի միջև բավարարված հայցապահանջի չափին համամասնորեն՝ Հայցվորից հոգուտ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ենթակա է բռնագանձելու 185.120 /հարյուր ութսունհինգ հազար հարյուր քսան/ ՀՀ դրամ, Պատասխանողից՝ 72.880 /յոթանասուներկու հազար ութ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:

Գերագույն դատարանը նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանի որոշմամբ փորձագետին վճարման ենթակա գումարը՝ 47.40 /քառասունյոթ հազար քառասուն/ ՀՀ դրամը ճիշտ է բաշխվել, ուստի անհրաժեշտ է գտնում այդ մասով որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ ԼՂՀ Գերագույն դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2017 թվականի փետրվարի 23-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել: Արժվիկ Նիկոլայի Հովհաննիսյանի հայցը բավարարել մասնակիորեն:

Իրինա Հրանտի Օսիպովայից հոգուտ Արժվիկ Նիկոլայի Հովհաննիսյանի բռնագանձել 2.314.000 /երկու միլիոն երեք հարյուր տասնչորս հազար/ ՀՀ դրամ՝ որպես փոխառության գումար, ինչպես նաև դրա նկատմամբ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները սկսած 2014 թվականի դեկտեմբերի 18-ից մինչև պարտավորության դադարման օրը:

2. Արժվիկ Նիկոլայի Հովհաննիսյանից հոգուտ Իրինա Հրանտի Օսիպովայի բռնագանձել 53.160 /հիսուներեք հազար հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համամասնորեն վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքի գումար:

Իրինա Հրանտի Օսիպովայից հոգուտ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բռնագանձել 185.120 /հարյուր ութսունհինգ հազար հարյուր քսան/ ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համամասնորեն հայցադիմումի և վերաքննիչ բողոքների համար հետաձգված պետական տուրքի գումար:

Արժվիկ Նիկոլայի Հովհաննիսյանից հոգուտ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բռնագանձել 72.880 /յոթանասուներկու հազար ութ հարյուր ութսուն/ ՀՀ դրամ՝ որպես հայցադիմումի և վերաքննիչ բողոքների համար հետաձգված պետական տուրքի գումար:

Որոշումը՝ մնացած մասով, թողնել օրինական ուժի մեջ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

**ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն**

**Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**